# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 75-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«______» ___________-ի 2019 թվականի N_______-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 75-Ն **ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ** ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ **ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության2006 թվականի հունվարի 26-ի «Օ**տարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ պետական պատվերի շրջանակներում ուսման գործուղված փրկարարական ծառայողներինդրամական վճարների չափը և վճարման կարգը սահմանելու մասին**» N 75-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում և 1-ին կետում, հավելվածի վերնագրում, 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում «ուսման» բառից հետո լրացնել «և վերապատրաստման» բառը.

2) որոշման նախաբանում «օրենքի» բառից հետո լրացնել «34-րդ հոդվածի 4-րդ մասին և» բառերը.

3) որոշման հավելվածի 2-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| NN ը/կ | Պաշտոնների խումբը | Դրամական վճ (ՀՀ դրամ) Ռուսաստանի Դաշնության ուսումնական հաստատությո ունկնդիրների |
|---|---|---|
| 1. | Փրկարարական ծառայության բարձրագույն պաշտոններ | 150 000 |
| 2. | Փրկարարական ծառայության գլխավոր պաշտոններ | 135 000 |
| 3. | Փրկարարական ծառայության ավագ պաշտոններ | 117 000 |
| 4. | Փրկարարական ծառայության միջին պաշտոններ | 108 000 |
| 5. | Փրկարարական ծառայության կրտսեր պաշտոններ | 99 000 |

».

4) որոշման հավելվածի 3-րդ կետում «18.000» թիվը փոխարինել «99 000» թվով.

5) որոշման հավելվածի 5-րդ կետում`

ա. «սովորող» բառից հետո լրացնել «վերապատրաստվող» բառը,

բ. հանել «աշխատակազմի» բառը:

2. 2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին` սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո` մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում անհրաժեշտ վերաբաշխումների վերաբերյալ` ելնելով Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Փրկարար ծառայության համար նախատեսված հատկացումների վերահաշվարկից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

2019 թվական _________ ___

ք. Երևան